ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16.04.2020

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդի 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 02/20-17 Լ որոշմամբ որոշվել է դադարեցնել ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 17.05.2019 թվականի թիվ 1/297 Ա որոշմամբ գրանցված «Արդշինբանկ» ՓԲԸ Ծրագրային ազդագրի շրջանակում «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից թողարկված հետևյալ պարտատոմսերի տեղաբաշխումները.

1) «Արդշինբանկ» ՓԲԸ Վարչության 05.03.2020 թվականի թիվ 01/010-59 Լ որոշմամբ 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար թողարկման ծավալով, մինչև 16.06.2022 թվականը մարման ժամկետով և 4.5% (չորս ամբողջ հինգ տասնորդական տոկոս) արժեկտրոնային եկամտաբերությամբ պարտատոմսերի տեղաբաշխում,

2) «Արդշինբանկ» ՓԲԸ Վարչության 05.03.2020 թվականի թիվ 01/010-59 Լ որոշմամբ 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ծավալով, մինչև 16.06.2022 թվականը մարման ժամկետով և 9.0% (ինը տոկոս) արժեկտրոնային եկամտաբերությամբ պարտատոմսերի տեղաբաշխում:

Նշված որոշմամբ սահմանվել է. տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձնել կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում և կարգով: